Luys Lnyu®

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍ - 2022

Հաշվետվություն «Հերիթեյջ» հիմնադրամի կողմից հրապարակված զեկույցի (2022թ.) հիման վրա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 1

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 3

2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ 9

3. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 11

4. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ 14

ԱՄՓՈՓՈՒՄ 18

ՆԱԽԱԲԱՆ

ԿՈՎԻԴ-19-ի համավարակը թերևս կարելի է համարել վերջին տասնամյակում համաշխարհային տնտեսության լրջագույն մարտահրավերներից մեկը՝ իր բազմավեկտոր հետևանքներով: Աշխարհի գրեթե բոլոր տնտեսությունները 2020 թվականին եղել են անկումային, ինչը, իհարկե, զարմանալի չէ՝ հաշվի առնելով հանրային առողջության պաշտպանության նպատակով տնտեսական գործունեության և մարդկանց տեղաշարժի վրա կառավարությունների կողմից կիրառված տարատեսակ սահմանափակումները: Ցավոք, այդ սահմանափակումների արդյունավետությունն առողջապահական տեսանկյունից այնքան էլ միանշանակ չէ: Մի բան, սակայն, պարզ է՝ *այդ սահմանափակումները ողջ աշխարհում հանգեցրել են տնտեսական ազատության չափազանց կարևոր սկզբունքներից շեղման*: Այդ սկզբունքներից են՝ օրենքի գերակայությունը, արդար մրցակցությունը, շուկայական ազատությունները, կառավարությունների թափանցիկությունն ու արդյունավետությունը և այլն:

Նշված սկզբունքներն էական նշանակություն ունեն տնտեսությունների զարգացման և աճի խթանման գործում: Տնտեսապես ավելի ազատ հասարակությունները զինված են տնտեսական գործունեություն իրականացնելու շատ ավելի լայն հնարավորություններով: Դա իր հերթին հանգեցնում է բնակչության կենսամակարդակի և կյանքի որակի բարձրացմանը, նվազեցնում է աղքատությունը և խթանում պետությունների կայուն զարգացումը: Այդ իսկ պատճառով, հետճգնաժամային շրջանում հատկապես կարևոր է արձանագրել, որ տնտեսությունների կայուն վերականգնում ապահովելու համար անհրաժեշտ է վերադառնալ տնտեսական ազատությունների սկզբունքների պահպանմանը, իսկ կառավարությունների ընդլայնված լիազորությունները չպետք է դառնան նորմ:

Հաշվի առնելով տնտեսական ազատության սկզբունքների կարևորությունը՝ «Հերիթեյջ» հիմնադրամը 1995թ. ի վեր հրապարակում է «Տնտեսական ազատության ինդեքս» ամենամյա զեկույցների շարքը՝ գնահատելով տնտեսական ազատության աստիճանը աշխարհի տարբեր երկրներում: Հիմնադրամն օրերս հրապարակել է «Տնտեսական ազատության ինդեքս - 2022» զեկույցը[1]: Զեկույցի կազմման համար հիմք են հանդիսացել 2020թ. երկրորդ կիսամյակից 2021թ. առաջին կիսամյակն ընկած ժամանակահատվածում աշխարհի 177 երկրների (այդ թվում՝ Հայաստանի) վերաբերյալ հավաքագրված տվյալները: Ըստ էության, զեկույցն ընդգրկում է համաշխարհային տնտեսական ճգնաժամի խորացման վերջին և հետճգնաժամային վերականգնման առաջին շրջանը:

[1] Զեկույցը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.heritage.org/index/download:

Համաձայն զեկույցի՝ տնտեսական ազատության համաշխարհային գնահատականը նախորդ ժամանակահատվածի համեմատ վատթարացել է 1.6 միավորով և այժմ հնարավոր 100-ից կազմում է 60 միավոր: Զեկույցում նաև նշվում է, որ չնայած համաշխարհային տնտեսական ազատության նկատելի անկմանը՝ դրա բարելավման և համընդհանուր բարեկեցության մակարդակի բարձրացման միջև կապը շարունակում է պահպանվել: Մասնավորապես, տնտեսապես «ազատ» և «հիմնականում ազատ» երկրների բնակչության կենսամակարդակը (նկատի է առնվում մեկ շնչի հաշվով եկամուտները)՝ միջին հաշվով ավելի քան երեք անգամ գերազանցում է այլ երկրների և գրեթե յոթ անգամ՝ տնտեսապես «ճնշված» երկրների համադրելի ցուցանիշներին:

Եթե աշխարհում տնտեսական ազատության սկզբունքների վատթարացումը հիմնականում պայմանավորված է եղել ԿՈՎԻԴ-19-ի համավարակով, ապա պետք է նկատենք, որ ինդեքսի հաշվարկման ժամանակահատվածում Հայաստանը գտնվել է կրկնակի բարդ իրավիճակում՝ պայմանավորված նաև Արցախյան 44-օրյա կործանիչ պատերազմի քաղաքական և անվտանգային շոկերով: Ուստի, «Տնտեսական ազատության ինդեքս - 2022» զեկույցում Հայաստանի մասով արձանագրված գնահատականներն արտացոլում են ոչ միայն ԿՈՎԻԴ-19-ից բխող, այլև պատերազմի շոկերի դիմագրավման համատեքստում ՀՀ իշխանությունների որդեգրած քաղաքականությունների արդյունավետությունը տնտեսական ազատության սկզբունքների պահպանման մասով, քանի որ վերջինս գլխավորապես բխում է պետական կառավարչական մարմինների գործունեության որակից և արդյունավետությունից:

Այսպես, Հայաստանում 2022թ. տնտեսական ազատության ինդեքսը նախորդ տարվա համեմատ նվազել է 6.6 միավորով և կազմել 65.3 միավոր, իսկ համաշխարհային վարկանիշային աղյուսակում Հայաստանի դիրքը վատթարացել է 26 հորիզոնականով, և նախորդ տարվա 32-րդ հորիզոնականից Հայաստանն այս տարի հայտնվել է 58-րդ հորիզոնականում: Արդյունքում, տնտեսապես «հիմնականում ազատ» երկրների շարքից Հայաստանը հետքայլ է կատարել դեպի տնտեսապես «չափավոր ազատ» երկրների խումբ: Ընդ որում, վերջին երկու տասնամյակների ընթացքում (2001 թվականից ի վեր) Հայաստանում տնտեսական ազատության ինդեքսը նման ցածր մակարդակում չէր գտնվել, և սա երկրի համար լրջագույն մարտահրավեր է:

Կարևորելով վերոգրյալը՝ «Լույս» հիմնադրամը շարունակում է տնտեսական ազատության ինդեքսի վերլուծությունների շարքը[2]: Այսպես, վերլուծության առաջին

[2] Վերլուծությունները 2019-ից ի վեր, տարեկան պարբերականությամբ, էլեկտրոնային տարբերակով հասանելի են «Լույս» հիմնադրամի պաշտոնական կայքէջում՝ https://bit.ly/3BA9Obe:

գլխում հակիրճ տրվել է ինդեքսի հիմնական նկարագրությունը և անդրադարձ է կատարվել դրա հաշվարկման մեթոդաբանությանը: Երկրորդ գլխում մեջբերվել են համաշխարհային կտրվածքով ինդեքսի առավել ուշագրավ գնահատականները: Երրորդ գլխում վերլուծվել են տնտեսական ազատության ինդեքսն ու դրա բաղադրիչներ Հայաստանում, իսկ չորրորդ գլխում ներկայացվել են տարածաշրջանային համադրումներն ու Հայաստանի դիրքը վարկանիշային աղյուսակներում: Այնուհետև ներկայացվել է վերլուծության ամփոփումը:

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Տնտեսական ազատության ինդեքսը (ՏԱԻ) գնահատում է կառավարությունների գործունեության ազդեցությունն ու արդյունավետությունը 12 ուղղություններով, որոնք «Հերիթեյջ» հիմնադրամի կողմից դիտարկվում են որպես տնտեսությունների աճի և զարգացածության բնութագրիչներ և հանդիսանում են տնտեսական ազատության հենասյուները: Ընդ որում, դրանք դասակարգվում են 4 հիմնական խմբերում՝ օրենքի գերակայություն, պետական հատվածի կշիռ, կարգավորումների արդյունավետություն և շուկայի բացություն (Գծապատկեր 1):

Գծապատկեր 1. Տնտեսական ազատության ինդեքսի կառուցվածքը



ՏԱԻ-ի հաշվարկման հիմքում ընկած 12 հենասյուները (ենթաինդեքսները) որոշակի վիճակագրական ցուցանիշների ագրեգացման հիման վրա գնահատվում և ստանդարտացվում են 0-100 միջակայքում, որից հետո հաշվարկվում է ընդհանուր ինդեքսը՝ որպես 12 ենթաինդեքսների պարզ միջին թվաբանական

(յուրաքանչյուր բաղադրիչ ստանում է միևնույն կշիռը), ինչի արդյունքում այն ևս ընդունում է արժեքներ 0-100 միջակայքում: Ի վերջո, ըստ տնտեսական ազատության աստիճանի՝ «Հերիթեյջ» հիմնադրամի կողմից երկրները ներառվում են հետևյալ 4 հիմնական խմբերում՝

- տնտեսապես ***ազատ*** երկրներ՝ ՏԱԻ-ի 80-100 միջակայք,
- տնտեսապես ***հիմնականում ազատ*** երկրներ՝ ՏԱԻ-ի 70-79.9 միջակայք,
- տնտեսապես ***չափավոր ազատ*** երկրներ՝ ՏԱԻ-ի 60-69.9 միջակայք,
- տնտեսապես ***հիմնականում ոչ ազատ*** երկրներ՝ ՏԱԻ-ի 50-59.9 միջակայք,
- տնտեսապես ***ճնշված*** երկրներ՝ ՏԱԻ-ի 0-49.9 միջակայք:

Նշենք նաև, որ տվյալ տարվա ՏԱԻ-ի հաշվարկման համար տվյալները հավաքագրվում են նախանախորդ տարվա երկրորդ կիսամյակի և նախորդ տարվա առաջին կիսամյակի ընթացքում: Այսինքն, 2022թ. ինդեքսն արտացոլում է 2020թ. հուլիսի 1-ից 2021թ. հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի դրությամբ տնտեսական ազատության մակարդակը:

Ստորև կներկայացնենք ՏԱԻ-ի 12 ենթաինդեքսներից յուրաքանչյուրի նկարագրությունը:

1. Սեփականության իրավունքի պաշտպանություն: Այս ենթաինդեքսը գնահատում է մասնավոր սեփականություն ձեռք բերելու և տնօրինելու՝ տվյալ երկրի իրավական դաշտի ընձեռած հնարավորությունները, ինչպես նաև այն, թե որքանով է մասնավոր սեփականության իրավունքը պաշտպանված օրենքներով, և արդյո՞ք իշխանությունները հարգում են այդ օրենքները: Ենթաինդեքսը հաշվարկվում է հետևյալ ցուցանիշների միջոցով՝

- մասնավոր (նյութական) սեփականության բռնագրավման ռիսկ,
- մտավոր սեփականության պաշտպանվածության մակարդակ,
- պայմանագրերի, սեփականության իրավունքի և օրենքների կիրառելիություն:

2. Արդարադատության արդյունավետություն: Այս ենթաինդեքսը գնահատում է, թե որքանով են տվյալ երկրում երաշխավորված քաղաքացիների իրավունքները, և որքանով են այդ իրավունքները պաշտպանված, այդ թվում՝ կառավարության և տարբեր խմբերի հակաօրինական գործողություններից: Արդյունավետ արդարադատությունը ենթադրում է արդար և արդյունավետ դատական համակարգի առկայություն, որը կապահովի օրենքների պատշաճ կիրառություն, իսկ դրանց խախտումների դեպքում՝ համապատասխան իրավական միջամտություն: Ենթաինդեքսը հաշվարկվում է հետևյալ ցուցանիշների միջոցով՝

- դատական համակարգի անկախություն,
- դատական գործընթացի որակ,
- հանրային ծառայությունների որակի և քաղաքացիական ծառայության անկախության վերաբերյալ ընկալումներ:

3. Կոռուպցիայի բացակայություն: Հաշվի առնելով կոռուպցիայի բացասական ազդեցությունը տնտեսական հարաբերությունների, ինչպես նաև պետական ինստիտուտների հանդեպ հանրային վստահության մակարդակի վրա՝ այս ենթաինդեքսը գնահատում է պետական մակարդակում համակարգային կոռուպցիայի առկայության աստիճանը, և թե որքանով է այն ազդում կառավարման որոշումների կայացման գործընթացի վրա՝ կաշառակերության, շորթման, նեպոտիզմի, հովանավորչության, յուրացման և այլ միջոցներով: Ենթաինդեքսի հաշվարկը հիմնված է հետևյալ ցուցանիշների վրա՝

- կոռուպցիայի ընկալման մակարդակ,
- կաշառակերության ռիսկ,
- կոռուպցիայի վերահսկում, ներառյալ էլիտաների և այլ խմբերի կողմից պետության «զավթումը»:

4. Հարկային բեռ: Այս ենթաինդեքսը միտված է գնահատելու, թե որքանով են կառավարությունները հարկային բեռի միջոցով սահմանափակում տնտեսական ակտիվությունը: Ընդունված տրամաբանությամբ՝ այն կառավարությունները, որոնք մասնավոր հատվածին (անհատներին և գործարարներին) թույլ են տալիս ինքնուրույն տնօրինել իրենց եկամուտների ավելի մեծ մասը, միտված են առավելագույնի հասցնել տնտեսական ազատությունը: Ենթաինդեքսի հաշվարկը հիմնված է հետևյալ ցուցանիշների վրա՝

- եկամտային հարկի վերին սահմանային դրույքաչափ,
- շահութահարկի վերին սահմանային դրույքաչափ,
- հարկեր/ՀՆԱ հարաբերակցության մակարդակ:

5. Պետական ծախսեր: Այս ենթաինդեքսը փորձում է գնահատել, թե որքանով է տնտեսական ազատությունը սահմանափակվում պետական ծախսերի պատճառով: Խնդիրն այն է, որ պետական ծախսերի բարձր մակարդակը մասնավոր հատվածի տնտեսական ակտիվության նվազեցման ռիսկեր է պարունակում: Նույնիսկ եթե պետական ծախսերի աճը հանգեցնում է տնտեսական աճի արագացման, վերջինս ժամանակավոր բնույթ է կրում և երկարաժամկետում առաջացնում է ռեսուրսների անարդյունավետ տեղաբաշխման ու մասնավոր ներդրումների դրդապատճառների կորզման խնդիրներ: Ավելին, պետական ծախսերի աճը հաճախ հանգեցնում է բյուրոկրատական

գործընթացների ընդլայնման, արտադրողականության նվազման, պետական պարտքի մեծացման, ինչն էլ լրացուցիչ բեռ է ստեղծում ապագա սերունդների համար՝ ավելի բարձր հարկերի տեսքով:

Ենթաինդեքսը հաշվարկվում է վերջին երեք տարիների պետական ծախսեր/ՀՆԱ միջինացված ցուցանիշը ոչ գծային եղանակով ստանդարտացնելու միջոցով: Մասնավորապես, այն երկրներում, որտեղ նշված ցուցանիշի արժեքը մոտ է զրոյին, ենթաինդեքսի գնահատականն ավելի քիչ է տուգանվում և մոտ է 100-ին, մինչդեռ այն երկրներում, որտեղ ցուցանիշը գերազանցում է 30%-ը՝ ենթաինդեքսի գնահատականը նվազեցվում է քառակուսային արագությամբ: Ընդ որում, եթե վերջին երեք տարիների պետական ծախսեր/ՀՆԱ միջինացված ցուցանիշը գերազանցում է 58%-ը, ենթաինդեքսը գնահատվում է 0: Այս ենթաինդեքսի թերությունը, թերևս, այն է, որ չի հաշվարկվում պետական ծախսերի օպտիմալ մակարդակ, քանի որ դա բազմագործոն երևույթ է և յուրաքանչյուր երկրի համար կրում է սուբյեկտիվ բնույթ: Արդյունքում, օրինակ, այնպիսի թերզարգացած երկրներում, որոնցում կառավարությունները չունեն ծախսեր կատարելու լայն ինստիտուցիոնալ կարողություններ՝ ենթաինդեքսը կստանա բարձր միավորներ: Այդուհանդերձ, նման երկրները տրամաբանորեն կստանան ավելի ցածր միավորներ որոշ այլ ենթաինդեքսների մասով:

6. Հարկաբյուջետային կայունություն: Այս ենթաինդեքսը գնահատում է երկրի հարկաբյուջետային կայունությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հարկաբյուջետային կայուն դիրքից շեղումները հանգեցնում են մակրոտնտեսական անկայունության, տնտեսական անորոշությունների աճի և հետևաբար՝ տնտեսական ազատությունների սահմանափակման: Հարկաբյուջետային կայունության երկու կարևոր ազդակներ են հանդիսանում պետական բյուջեի պակասուրդի և պետական պարտքի մակարդակները, քանի որ դրանց անկառավարելի աճը լրջագույն վտանգ է ամբողջ հարկաբյուջետային հատվածի կայունության համար: Այդ իսկ պատճառով ենթաինդեքսը հաշվարկվում է հետևյալ երկու ցուցանիշների միջոցով՝

- պետական բյուջեի պակասուրդ/ՀՆԱ հարաբերակցության վերջին երեք տարիների միջին արժեք (կշիռը ենթաինդեքսի գնահատականում՝ 80%),
- պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցություն (կշիռը ենթաինդեքսի գնահատականում՝ 20%):

7. Գործարարության ազատություն: Առանց պետության անհարկի միջամտության բիզնես հիմնադրելու և ղեկավարելու անհատի կարողությունը տնտեսական ազատության առանցքային սկզբունքներից է: Այս ենթաինդեքսը ցույց է տալիս, թե որքանով են երկրի իրավակարգավորումների և

ենթակառուցվածքների համակարգերը խոչընդոտում ձեռնարկատիրական արդյունավետ գործունեություն ծավալելու հնարավորությունները: Ենթաինդեքսը հաշվարկվում է հետևյալ չորս ցուցանիշների միջոցով՝

- էլեկտրաէներգիայի հասանելիություն,
- գործարար միջավայրի ռիսկայնություն,
- իրավակարգավորումների որակ,
- կանանց ներառականությունը տնտեսական գործընթացներում:

8. Աշխատանքի ազատություն: Տնտեսական ազատության հաջորդ կարևորագույն սկզբունքներից մեկը աշխատուժի՝ աշխատաշուկայում ազատ մրցակցելու և աշխատանք գտնելու կարողությունն է: Միևնույն ժամանակ, կարևոր է գործատուների ազատությունը մրցակցային աշխատանքային պայմանագրեր կնքելու և լուծարելու հարցում, ինչն ինքնին կարևոր դերակատարություն ունի ընդհանուր արտադրողականության բարձրացման և տնտեսական աճի խթանման գործում: Վերոգրյալի համատեքստում գնահատվում է սույն ենթաինդեքսը՝ որպես հետևյալ ցուցանիշների կշռված միջին՝

- նվազագույն աշխատավարձի մակարդակ,
- արհմիությունների իրավունքներ,
- ամենամյա վճարովի արձակուրդի հասանելիություն,
- հաստիքի կրճատման պատճառով աշխատանքից ազատման օրինական թույլտվություն,
- հաստիքի կրճատման պատճառով աշխատանքից ազատման վերաբերյալ ծանուցման ժամկետ,
- հաստիքի կրճատման պատճառով աշխատանքից ազատման պարտադիր վճարի չափ,
- աշխատանքի արտադրողականություն,
- աշխատուժի մասնակցության գործակից,
- արտաժամյա աշխատանքի սահմանափակումներ:

9. Դրամավարկային ազատություն: Հաշվի առնելով, որ մակրոտնտեսական կայունության, հետևաբար նաև տնտեսական ազատությունների պահպանման հիմնաքարերից մեկը գների կայունությունն է՝ այս ենթաինդեքսը փորձում է գնահատել դրամավարկային քաղաքականություն իրականացնող մարմինների ազատությունը՝ գների կայունության ապահովման գործում: Ընդ որում, ներկայումս գրեթե բոլոր դրամավարկային տեսություններն առավելությունը տալիս են ցածր գնաճին և կենտրոնական բանկերի անկախությանը: Մյուս կողմից, լայն ճանաչում է գտել այն միտքը, որ կառավարությունների կողմից գների արհեստական

վերահսկողությունը թուլացնում է շուկաների արդյունավետությունը: Այս համատեքստում ենթաինդեքսը հաշվարկվում է հետևյալ ցուցանիշների միջոցով՝

- գնաճի տեմպ (վերջին երեք տարիների կշռված միջինը),
- կառավարության կողմից գների արհեստական վերահսկման առկայություն:

10. Առևտրի ազատություն: Այս ենթաինդեքսը գնահատում է տնտեսական գործակալների հնարավորությունները միջազգային շուկաներում ազատ առևտուր իրականացնելու գործում՝ որպես տնտեսական ազատության առանցքային սկզբունքներից մեկը: Ենթաինդեքսը հաշվարկվում է հետևյալ ցուցանիշների միջոցով՝

- միջին կշռված մաքատուրքի գործակից,
- ոչ մաքսային խոչընդոտների որակական գնահատական:

11. Ներդրումային ազատություն: Այս ենթաինդեքսը գնահատում է ներդրումային կապիտալի շարժի (և՛ ներքին, և՛ արտաքին շուկաներում) վրա կառավարությունների կողմից դրված սահմանափակումների մակարդակը: Այս սահմանափակումները կարող են վերաբերել կապիտալի հոսքերին, արտարժույթի առուվաճառքին, միջբանկային փոխանցումներին, հողի սեփականությանը և այլն: Ենթաինդեքսի հաշվարկման համար հաշվի է առնվում նաև ներդրումային միջավայրի անվտանգությունը, բազային ենթակառուցվածքների առկայությունը և կառավարությունների այլ քաղաքականությունները, որոնք կարող են նպաստել կամ խանգարել մասնավոր ներդրումների ներգրավման գործընթացին կամ սահմանափակել ներդրումային ազատությունը:

12. Ֆինանսական ազատություն: Այս ենթաինդեքսը գնահատում է բանկային գործունեության արդյունավետությունը, որպես պետական վերահսկողությունից և միջամտությունից անկախ բանկային համակարգի (պետական առևտրային բանկերի բացակայություն, կենտրոնական բանկերի անկախություն և այլն) առկայություն: Ենթաինդեքսի հաշվարկը հիմնված է հետևյալ ցուցանիշների վրա՝

- ֆինանսական ծառայությունների պետական կարգավորման աստիճան,
- բանկերի և այլ ֆինանսական ինստիտուտների կապիտալում պետության մասնակցություն՝ ուղղակի և անուղղակի տնօրինման եղանակներով,
- վարկերի տեղաբաշխման վրա կառավարության ազդեցություն,
- ֆինանսական և կապիտալի շուկաների զարգացածություն,
- միջազգային մրցակցության առկայություն:

2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Տնտեսական ազատության ինդեքսի համաշխարհային միջինը 2022թ. կազմել է 60 միավոր՝ նախորդ տարվա 61.6 միավորի համեմատ վատթարանալով 1.6 միավորով: Արդյունքում համաշխարհային տնտեսությունը շարունակում է մնալ *չափավոր ազատ*, թեև գնահատականը հասել է այս դասի ստորին մակարդակին:

Ինչպես երևում է Գծապատկեր 2-ից, ՏԱԻ-ի 2022թ. գնահատականներով *տնտեսապես ազատ* է ճանաչվել 7 երկիր, *հիմնականում ազատ* է 27 երկիր, և ևս 54 երկիր ճանաչվել է *չափավոր ազատ*: Մյուս կողմից, սակայն 89 երկիր կամ ՏԱԻ-ի հաշվարկներում ներառված 177 երկրների 50%-ը ստացել են 60 միավորից ցածր գնահատականներ և դասվում *հիմնականում ոչ ազատ* (57 երկիր) և *ճնշված* (32 երկիր, այդ թվում՝ Չինաստանը) տնտեսությունների շարքին:

Գծապատկեր 2. Տնտեսական ազատության աստիճանն աշխարհում՝ ըստ «Հերիթեյջ» հիմնադրամի դասակարգման, 2022թ., երկիր



Նշենք, որ աշխարհի վարկանիշային աղյուսակը տնտեսական ազատության ինդեքսով այս տարի շարունակում է գլխավորել Սինգապուրը (84.4 միավոր), որին հաջորդում են Շվեյցարիան (84.2 միավոր) և Իռլանդիան (82.0 միավոր): Տնտեսապես ազատ երկրների յոթնյակը լրացնում են Նոր Զելանդիան (80.6 միավոր), Լյուքսեմբուրգը (80.6 միավոր), Թայվանը (80.1 միավոր) և Էստոնիան (80.0 միավոր): Ընդ որում, վերջին երեքն առաջին անգամ են հայտնվում տնտեսապես ազատ երկրների շարքում: Նշենք նաև, որ այս տարի տնտեսապես ազատ երկրներից դուրս է մնացել Ավստրալիան: Տնտեսապես ճնշված երկրների ստորին եռյակը կազմում են Կուբան (29.5 միավոր), Վենեսուելան (24.8 միավոր) և Հյուսիսային Կորեան (3.0 միավոր):

Գծապատկեր 3-ում ներկայացված են 2020-2022թթ. ՏԱԻ-ի միջին գնահատականներն աշխարհի 5 տարածաշրջաններում: Նկատենք, որ Եվրոպայի տարածաշրջանը 69.5 միավորով շարունակում է գրավել առաջատար դիրքերը, թեև բոլոր տարածաշրջաններում, այդ թվում՝ Եվրոպայում, ՏԱԻ-ի միջին արժեքը 2022-ին եղել է անկումային: Ընդ որում, 2021-ի համեմատ 2022-ին ամենախոշոր հետընթացը գրանցվել է Միջին Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի տարածաշրջանում (անկումը՝ 5.7 միավոր): Անկման մեծությամբ հաջորդը Անդրսահարյան Աֆրիկայի և Ասիախաղաղօվկիանոսյան տարածաշրջաններն են՝ համապատասխանաբար 2.3 և 1.7 միավորով: Հյուսիսային և Հարավային Ամերիկայում ՏԱԻ-ի անկումը եղել է ամենափոքրը՝ 0.1 միավոր: Առաջատար դիրքերը պահպանած Եվրոպայում, որտեղ ըստ «Հերիթեյջ»-ի դասակարգման ներառված է նաև Հայաստանը՝ ՏԱԻ-ի ցուցանիշը նվազել է 0.6 միավորով: Արդյունքում, բացի Եվրոպայից, մյուս բոլոր տարածաշրջաններն այժմ համարվում են տնտեսապես *հիմնականում ոչ ազատ*, իսկ Եվրոպան՝ *չափավոր ազատ*՝ նախորդ տարվա հիմնականում ազատ կատեգորիայի փոխարեն: Ընդ որում, հենց Եվրոպայի տարածաշրջանի երկրների շնորհիվ է, որ ՏԱԻ-ի համաշխարհային միջինով աշխարհը շարունակում է մնալ *չափավոր ազատ* (60 միավորով): Առանց այս տարածաշրջանի համաշխարհային տնտեսությունը կգնահատվեր *հիմնականում ոչ ազատ*:

Նկատենք նաև, որ Հայաստանը 2022թ. ՏԱԻ-ի միավորով զբաղեցնում է Եվրոպայի միջին գնահատականից նկատելիորեն ցածր դիրք՝ 4.2 միավորով (տենդենցը հակառակն է եղել 2020-2021թթ.), ինչը, իհարկե, փաստում է, որ տարածաշրջանի այլ երկրների համեմատ Հայաստանում տնտեսական ազատության սկզբունքներից շեղումն ավելի մեծ է եղել ինդեքսի հաշվարկման ժամանակահատվածում: Նշենք նաև, որ 2022 թվականին ՀՀ ՏԱԻ-ի գնահատականը, ինչպես նախորդ տարիներին, ավելի բարձր է, քան համաշխարհային միջինը: Այդուհանդերձ, եթե նախորդ տարի այդ ճեղքվածքը կազմում էր 10.3 միավոր, այս տարի այն գրեթե կրկնակի նեղացել է և կազմում է 5.3 միավոր, ինչը, իհարկե, բացասական երևույթ է:

Գծապատկեր 3. ՏԱԻ-ի արժեքները ՀՀ-ում, աշխարհում և աշխարհի տարբեր տարածաշրջաններում, 2020-2022թթ.



3. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

2022 թվականին Հայաստանում տնտեսական ազատության ինդեքսը նախորդ տարվա համեմատ նվազել է 6.6 միավորով և կազմել 65.3 միավոր, իսկ համաշխարհային վարկանիշային աղյուսակում Հայաստանի դիրքը վատթարացել է 26 հորիզոնականով, և նախորդ տարվա 32-րդ հորիզոնականից Հայաստանն այս տարի հայտնվել է 58-րդ հորիզոնականում (Գծապատկեր 4): Արդյունքում, ըստ «Հերիթեյջ»-ի դասակարգման, տնտեսապես *հիմնականում ազատ* երկրների խմբից Հայաստանը հայտնվել է *չափավոր ազատ* երկրների շարքում: Ընդ որում, 2001 թվականից ի վեր տնտեսական ազատության ինդեքսը Հայաստանում այսպիսի խոր հետընթաց չի գրանցել և չի հայտնվել նման ցածր մակարդակում: Ի դեպ, ՀՀ դիրքը ևս միջազգային վարկանիշային աղյուսակում նշված շրջանում երբեք չի եղել այսպես ցածր:

Գծապատկեր 4. ՏԱԻ-ն Հայաստանում և ՀՀ դիրքն ըստ ՏԱԻ-ի, 2017-2022թթ.



Աղյուսակ 1-ը հուշում է, որ Հայաստանում ՏԱԻ-ի անկումը 2022 թվականին բազմագործոն է և արտացոլում է տնտեսական ազատության տարբեր սկզբունքների խախտման արդյունքները:

Մասնավորապես, ինդեքսի անկման վրա ամենամեծ բացասական ազդեցությունը նկատվել է *կարգավորումների արդյունավետության* ուղղությունից: Այսպես, *աշխատանքի ազատության ենթաինդեքսը* 2022-ին 2021-ի համեմատ նվազել է 27.3 միավորով և կազմել 47.2 միավոր, ինչի արդյունքում այս մասով Հայաստանը տնտեսապես *հիմնականում ազատ* երկրների շարքից հայտնվել է 3 դաս ցածր՝ տնտեսապես *ճնշված* երկրների խմբում: Զգալիորեն կրճատվել է նաև *գործարարության ազատության ենթաինդեքսի* գնահատականը (17 միավորով), ինչի արդյունքում գործարարության ազատությամբ տնտեսապես *ազատ* երկրների խմբից Հայաստանը հետնահանջ է կատարել *չափավոր ազատ* երկրների խումբ:

Աղյուսակ 1. ՏԱԻ-ն և դրա ենթաինդեքսները ՀՀ-ում, 2021-2022թթ.

		2021թ.	2022թ.	Փոփոխությունը
Տնտեսական ազատության ինդեքս		71.9	65.3	**-6.6**
Օրենքի գերակայություն	*Սեփականության իրավունքի պաշտպանություն*	57.3	50.4	**-6.9**
	Արդարադատության արդյունավետություն	55.3	33.1	**-22.2**
	Կոռուպցիայի բացակայություն	45	50.8	**5.8**
Պետական հատվածի չափ	*Հարկային բեռ*	87.1	86.9	**-0.2**
	Պետական ծախսեր	81.3	78.9	**-2.4**
	Հարկաբյուջետային կայունություն	84.3	75.5	**-8.8**
Կարգավորումների արդյունավետություն	*Գործարարության ազատություն*	81.9	64.9	**-17**
	Աշխատանքի ազատություն	74.5	47.2	**-27.3**
	Դրամավարկային ազատություն	76.9	77.5	**0.6**
Շուկայի բացություն	*Առևտրի ազատություն*	73.8	73.6	**-0.2**
	Ներդրումային ազատություն	75	75	**0**
	Ֆինանսական ազատություն	70	70	**0**

Հաջորդ ամենամեծ բացասական ազդեցությունը բխում է *օրենքի գերակայության ուղղությամբ* տնտեսական ազատության սկզբունքների շեղումից: Նկատենք, որ *արդարադատության արդյունավետության ենթաինդեքսի* գնահատականը նախորդ տարվա համեմատ նվազել է 22.2 միավորով և կազմել 33.1 միավոր, ինչի հետևանքով Հայաստանը այս ենթաինդեքսի գծով *հիմնականում ոչ ազատ* երկրների խմբից հայտնվել է *ճնշված* երկրների շարքում: Ընդ որում, զեկույցի հեղինակները նշում են, որ ՀՀ-ում դատարանները շարունակաբար ենթարկվում են քաղաքական ազդեցության, իսկ դատական ինստիտուտները խարխլված են անարդյունավետության և ինստիտուցիոնալ

կոռուպցիայի առկայության պատճառով: *Սեփականության իրավունքի պաշտպանության ենթաինդեքսը* ևս նկատելիորեն կրճատվել է (6.9 միավորով), ինչը տեղի է ունենում արդեն երկրորդ տարին անընդմեջ: Նկատենք նաև, որ որոշակիորեն (5.8 կետով) բարելավվել է *կոռուպցիայի բացակայության ենթաինդեքսը*, թեև զեկույցում նշվում է, որ կոռուպցիան ՀՀ-ում շարունակում է դիտվել որպես համակարգային խնդիր:

Պետական հատվածի կշիռը բնութագրող հենասյուները ևս որոշակի վատթարացում են գրանցել: Մասնավորապես, նկատելի *է հարկաբյուջետային կայունության ենթաինդեքսի* նվազումը 8.8 կետով և *պետական ծախսերի ենթաինդեքսի* նվազումը 2.4 կետով: Երկու դեպքում էլ Հայաստանը տնտեսապես *ազատ* երկրների շարքից հայտնվել է *հիմնականում ազատ* երկրների շարքերում: Հարկաբյուջետային կայունության ենթաինդեքսի նվազումը 2022-ին 2021-ի համեմատ պայմանավորված է երկու գործոնով: Առաջինը պետական բյուջեի պակասուրդ/ՀՆԱ հարաբերակցության վերջին երեք տարիների միջին ցուցանիշի աճն է, որը նախորդ տարվա 2.5%-ից այս տարի կազմել է 3.2%: Երկրորդը պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցության մակարդակի՝ նախորդ տարվա համեմատ 9.4 տոկոսային կետով աճն է, ինչի հետևանքով այն կազմել է 62.8%:

4. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ

Ուսումնասիրության այս մասում կներկայացնենք ՏԱԻ-ի և վարկանիշային աղյուսակներում դրա դիրքի առնչությամբ Հայաստանի համեմատականները տարբեր տարածաշրջաններում:

Ինչպես պարզ է դառնում Աղյուսակ 2-ից, 2022 թվականին Հայաստանը Եվրոպայի տարածաշրջանում զբաղեցնում է 34-րդ հորիզոնականը, ինչը նշանակում է, որ նախորդ տարվա 18-րդ հորիզոնականի համեմատ գրանցվել է դիրքային հետընթաց 16 հորիզոնականով, և Եվրոպայի այլ երկրների հանդեպ նկատելիորեն թուլացել է Հայաստանի մրցակցային առավելությունը: Ընդ որում, պետք է նկատենք, որ տարածաշրջանում ոչ մի երկիր, բացի Հայաստանից, այս տարի այլ երկրների հանդեպ իր մրցակցային առավելությունը նման բարձր տեմպերով չի կորցրել: Ինդեքսի գնահատականի անկման խորությամբ ևս Հայաստանը նշված երկրների շարքում վատագույն քառյակում է՝ Ադրբեջանից, Բելառուսից և Թուրքիայից առաջ:

Աղյուսակ 2. ՏԱԻ-ին Եվրոպայի երկրներում, 2021-2022թթ.

Երկիր	ՏԱԻ 2021	ՏԱԻ 2022	Փոփոխությունը	Դիրք 2021	Դիրք 2022	Փոփոխությունը
Շվեյցարիա	81.9	84.2	2.3	1	1	0
Իռլանդիա	81.4	82.0	0.6	2	2	0
Լյուքսեմբուրգ	76.0	80.6	4.6	11	3	8
Էստոնիա	78.2	80.0	1.8	4	4	0
Նիդերլանդներ	76.8	79.5	2.7	9	5	4
Ֆինլանդիա	76.1	78.3	2.2	10	6	4
Դանիա	77.8	78.0	0.2	5	7	-2
Շվեդիա	74.7	77.9	3.2	12	8	4
Իսլանդիա	77.4	77.0	-0.4	6	9	-3
Նորվեգիա	73.4	76.9	3.5	15	10	5
Գերմանիա	72.5	76.1	3.6	16	11	5
Լիտվա	76.9	75.8	-1.1	8	12	-4
Լատվիա	72.3	74.8	2.5	17	13	4
Չեխիա	73.8	74.4	0.6	14	14	0
Ավստրիա	73.9	73.8	-0.1	13	15	-2
Կիպրոս	71.4	72.9	1.5	19	16	3
Մեծ Բրիտանիա	78.4	72.7	-5.7	3	17	-14
Վրաստան	77.2	71.8	-5.4	7	18	-11
Մալթա	70.2	71.5	1.3	21	19	2
Բուլղարիա	70.4	71.0	0.6	20	20	0
Պորտուգալիա	67.5	70.8	3.3	29	21	8
Սլովենիա	68.3	70.5	2.2	28	22	6
Սլովակիա	66.3	69.7	3.4	33	23	10
Բելգիա	70.1	69.6	-0.5	22	24	-2
Լեհաստան	69.7	68.7	-1	25	25	0
Իսպանիա	69.9	68.2	-1.7	24	26	-2
Խորվաթիա	63.6	67.6	4	38	27	11
Ռումինիա	69.5	67.1	-2.4	26	28	-2
Հունգարիա	67.2	66.9	-0.3	30	29	1
Ալբանիա	65.2	66.6	1.4	35	30	5
Ֆրանսիա	65.7	65.9	0.2	34	31	3
Մակեդոնիա	68.6	65.7	-2.9	27	32	-5
Իտալիա	64.9	65.4	0.5	36	33	3
Հայաստան	**71.9**	**65.3**	**-6.6**	**18**	**34**	**-16**
Սերբիա	67.2	65.2	-2	31	35	-4
Բոսնիա և Հերցեգովինա	62.9	63.4	0.5	40	36	4
Ադրբեջան	70.1	61.6	-8.5	23	37	-14
Հունաստան	60.9	61.5	0.6	44	38	6
Մոլդովա	62.5	61.3	-1.2	41	39	2
Կոսովո	66.5	60.1	-6.4	32	40	-8
Մոնտենեգրո	63.4	57.8	-5.6	39	41	-2
Թուրքիա	64.0	56.9	-7.1	37	42	-5
Ռուսաստան	61.5	56.1	-5.4	42	43	-1
Ուկրաինա	56.2	54.1	-2.1	45	44	1
Բելառուս	61.0	53.0	-8	43	45	-2

Եվրոպայի լավագույն քառյակը 2022-ին գլխավորում են Շվեյցարիան, Իռլանդիան, Լյուքսեմբուրգը և Էստոնիան (2022թ. աշխարհի յոթ ազատ տնտեսություններից են): Հատկանշական է Լյուքսեմբուրգի առաջընթացը, որը 2021-ին տարածաշրջանում 11-րդն էր: Նկատենք, որ Մեծ Բրիտանիան նախորդ տարվա 3-րդ հորիզոնականից այս տարի հայտնվել է 17-րդ հորիզոնականում:

Եվրոպայի տարածաշրջանում վատագույն արդյունքները գրանցել են Մոնտենեգրոն, Թուրքիան, Ռուսաստանը, Ուկրաինան և Բելառուսը, որոնց ՏԱԻ-ի միավորը 2022-ին ընկած է 50-ից 59.9 միջակայքում, ինչի արդյունքում այս երկրները համարվում են տնտեսապես *հիմնականում ոչ ազատ*: Ընդ որում, նախորդ տարի նշված երկրներից միայն Ուկրաինան էր կրկին համարվում հիմնականում ոչ ազատ, իսկ մյուսները չափավոր ազատ տնտեսությունների խմբին էին դասվում:

ԵԱՏՄ երկրների համեմատ ՏԱԻ-ով 2022-ին Հայաստանը զբաղեցնում է առաջատար դիրքեր (Գծապատկեր 5): Նկատենք, որ այս տարի նշված բոլոր երկրներում գրանցվել են անկումներ: Խոր հետընթացը ՏԱԻ-ի և աշխարհում զբաղեցրած դիրքի մասով գրանցվել է հետևյալ հաջորդականությամբ. Բելառուս՝ 8.0 միավոր և 40 հորիզոնական, Ղրղզստան՝ 7.9 միավոր և 38 հորիզոնական, Ղազախստան՝ 6.7 միավոր և 30 հորիզոնական, Հայաստան՝ 6.6 միավոր և 26 հորիզոնական, Ռուսաստան՝ 5.4 միավոր և 21 հորիզոնական: Հայաստանը և Ղազախստանը *հիմնականում ազատ* տնտեսություններից անցում են կատարել *չափավոր ազատ* տնտեսությունների շարքեր, իսկ Բելառուսը, Ռուսաստանը և Ղրղզստանը *չափավոր ազատ* տնտեսությունների խմբից հայտնվել են մեկ կարգ ցածր՝ *հիմնականում ոչ ազատ* տնտեսությունների շարքերում:

Գծապատկեր 5. ՏԱԻ-ն ԵԱՏՄ երկրներում, 2020-2022թթ.



Հարևան երկրների հետ համեմատության մեջ նկատենք, որ 2022-ին տնտեսական ազատության աստիճանով Հայաստանը շարունակում է զիջել միայն Վրաստանին, որի ՏԱԻ-ն կազմում է 71.8 միավոր՝ 6.5 միավորով գերազանցելով Հայաստանի ցուցանիշին: Երրորդ հորիզոնականը 61.6 միավորով զբաղեցնում է Ադրբեջանը, որը ՏԱԻ-ով Հայաստանից հետ է մնում 3.7 միավորով: Թուրքիան 56.9 միավորով զբաղեցնում է չորրորդ հորիզոնականը, իսկ Իրանը 42.4 միավորով եզրափակում է տարածաշրջանային սանդղակը: Վերջիններս ՏԱԻ-ով Հայաստանից հետ են մնում համապատասխանաբար 8.4 և 22.9 միավորով (Գծապատկեր 6):

Գծապատկեր 6. ՏԱԻ-ն ՀՀ-ում և հարևան երկրներում, 2020-2022թթ.



Աղյուսակ 3-ից պարզ է դառնում, որ նախորդ տարվա համեմատ թե՛ ՏԱԻ-ի արժեքով, թե՛ միջազգային վարկանիշային աղյուսակում զբաղեցրած դիրքով Հայաստանի հարևան երկրներից վատագույն արդյունքը գրանցել է Ադրբեջանը, որի ինդեքսը նվազել է 8.5 միավորով, իսկ դիրքն աշխարհում վատթարացել է 38 հորիզոնականով: Թուրքիայի գնահատականը նվազել է 7.1 միավորով, ինչի արդյունքում վերջինս դիրքային հետընթաց է գրանցել աշխարհում 31 հորիզոնականով: Հայաստանում, ինչպես արդեն նշել ենք, ՏԱԻ-ի անկումը կազմել է 6.6 միավոր, իսկ աշխարհում զբաղեցրած դիրքով հետընթացը կազմել է 26 հորիզոնական: Անկման մեծությամբ հաջորդը Վրաստանն է՝ ՏԱԻ-ի մասով՝ 5.4 միավոր, իսկ աշխարհում զբաղեցրած դիրքով հետընթացը՝ 14 հորիզոնական: ՏԱԻ-ն նվազել է նաև Իրանում (4.8 միավորով), ինչի արդյունքում աշխարհի երկրների համեմատ վերջինս կորցրել է մրցակցային առավելությունը ևս 2 հորիզոնականով՝ զբաղեցնելով 170-րդ հորիզոնականը:

Աղյուսակ 3. ՏԱԻ-ի արժեքների և հորիզոնականների փոփոխությունը ՀՀ-ում և հարևան երկրներում, 2020-2022թթ.

Երկիր	ՏԱԻ			ՏԱԻ փոփոխությունը		ՏԱԻ հորիզոնական			ՏԱԻ հորիզոնականի փոփոխությունը	
	2020	2021	2022	2020-2021	2021-2022	2020	2021	2022	2020-2021	2021-2022
Վրաստան	77.1	77.2	71.8	0.1	-5.4	11	12	26	-1	-14
Հայաստան	70.6	71.9	65.3	1.3	-6.6	34	32	58	2	-26
Թուրքիա	64.4	64	56.9	-0.4	-7.1	71	76	107	-5	-31
Ադրբեջան	69.3	70.1	61.6	0.8	-8.5	44	37	75	7	-38
Իրան	49.2	47.2	42.4	-2	-4.8	164	168	170	-4	-2

Նկատենք նաև, որ Վրաստանը շարունակում է մնալ տնտեսապես *հիմնականում ազատ* երկրների շարքում, Հայաստանը և Ադրբեջանը հայտնվել են 1 կարգ ցածր՝ *չափավոր ազատ* տնտեսությունների խմբում, Թուրքիան չափավոր ազատ տնտեսություններից հետնահանջ է կատարել և գտնվում է *հիմնականում ոչ ազատ* տնտեսությունների խմբում, իսկ Իրանը շարունակում է մնալ *ճնշված* տնտեսությունների խմբում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով 2022 թվականին աշխարհում և Հայաստանում Տնտեսական ազատության ինդեքսի վերաբերյալ վերլուծությունը՝ կարող ենք արձանագրել.

- 2022թ. ՏԱԻ-ի արդյունքներով, որն ըստ էության ամփոփում է 2020թ. համաշխարհային տնտեսական ճգնաժամի խորացման վերջին և 2021թ. հետճգնաժամային վերականգնման առաջին շրջանը՝ տնտեսական ազատության սկզբունքներից շեղում նկատվել է ողջ աշխարհում՝ արտացոլելով ճգնաժամի պատճառով վեր հանված ինստիտուցիոնալ խոցելիությունները և կառավարությունների անարդյունավետությունները:
- ՏԱԻ-ի համաշխարհային միջինը 2022թ. կազմել է 60 միավոր՝ նախորդ տարվա համեմատ վատթարանալով 1.6 միավորով: Արդյունքում համաշխարհային տնտեսությունը շարունակում է մնալ *չափավոր ազատ*, թեև համաշխարհային միջինն այժմ այս դասի ստորին եզրին է:
- Ինդեքսի հաշվարկներում ներառված 177 երկրների 50%-ը (89 երկիր) ստացել է 60 միավորից ցածր գնահատականներ և դասվում է *հիմնականում ոչ ազատ* (57 երկիր) և *ճնշված* (32 երկիր) տնտեսությունների շարքին:
- 2022-ին 177 երկրների շարքում ամենաբարձր ցուցանիշները գրանցել են Սինգապուրը, Շվեյցարիան, Իռլանդիան, Նոր Զելանդիան, Լյուքսեմբուրգը, Թայվանը և Էստոնիան, որոնք ունեն 80-ից բարձր միավոր և կազմում են 2022թ. տնտեսապես ազատ երկրների յոթնյակը: Վատագույն արդյունք են

գրանցել Կուբան, Վենեսուելան և Հյուսիսային Կորեան (միավորները՝ 30-ից ցածր), որոնք կազմում են տնտեսապես ճնշված երկրների ստորին եռյակը:

- 2022 թվականին Հայաստանում ՏԱԻ-ն նախորդ տարվա համեմատ նվազել է 6.6 միավորով և կազմել 65.3 միավոր, իսկ համաշխարհային վարկանիշային աղյուսակում Հայաստանի դիրքը վատթարացել է 26 հորիզոնականով, և նախորդ տարվա 32-րդ հորիզոնականից Հայաստանն այս տարի հայտնվել է 58-րդ հորիզոնականում:
- 2001 թվականից ի վեր ՏԱԻ-ն Հայաստանում այսպիսի խոր հետընթաց չի գրանցել և չի հայտնվել նման ցածր մակարդակում: Ի դեպ, ՀՀ դիրքը ևս միջազգային վարկանիշային աղյուսակում նշված ժամանակահատվածում երբեք չի եղել այսքան ցածր:
- 2022 թվականին տնտեսապես *հիմնականում ազատ* երկրների խմբից Հայաստանը հայտնվել է *չափավոր ազատ* երկրների շարքում: Այս հետընթացը Հայաստանում բազմագործոն է և արտացոլում է տնտեսական ազատության տարբեր սկզբունքների խախտման արդյունքները:
- Նկատելիորեն վատթարացել է *աշխատանքի ազատության ենթաինդեքսի* գնահատականը (2021-ի համեմատ՝ 27.3 միավորով), ինչի արդյունքում այս մասով Հայաստանը տնտեսապես *հիմնականում ազատ* երկրների շարքից հայտնվել է վերջին կարգում՝ տնտեսապես *ճնշված* երկրների խմբում: Այս երևույթը խոսում է ՀՀ աշխատաշուկայում առկա կառուցվածքային խոցելիությունների և այդ ուղղությամբ կառավարության գործողությունների ցածր արդյունավետության մասին:
- *Գործարարության ազատության ենթաինդեքսի* գնահատականը ևս զգալիորեն անկում է գրանցել (2021-ի համեմատ՝ 17 միավորով), ինչի արդյունքում այս մասով Հայաստանը տնտեսապես *ազատ* երկրների շարքից հետընթաց է գրանցել և հայտնվել *չափավոր ազատ* երկրների խմբում: Ընդ որում, այս հանգամանքը համահունչ է ՀՀ-ում նկատվող ցածր ներդրումային ակտիվության հետ, որը երկարաժամկետում նման տեմպերի պահպանման պարագայում էապես վնաս է հասցնելու ՀՀ տնտեսական աճին և դրա կառուցվածքին:
- *Արդարադատության արդյունավետության ենթաինդեքսը* ևս խոր անկումային է (2021-ի համեմատ՝ 22.2 միավորով), ինչի հետևանքով այս մասով ևս Հայաստանը *հիմնականում ոչ ազատ* երկրների խմբից հայտնվել է հետնապահ՝ տնտեսապես *ճնշված* երկրների շարքում: Ընդ որում, «Հերիթեյջ» հիմնադրամը շեշտում է, որ ՀՀ-ում դատարանները շարունակաբար ենթարկվում են քաղաքական ազդեցության, իսկ դատական ինստիտուտները խարխլված են անարդյունավետության և ինստիտուցիոնալ կոռուպցիայի առկայության պատճառով:

- *Սեփականության իրավունքի պաշտպանության ենթաինդեքսը* երկրորդ տարին անընդմեջ անկում է գրանցում (2021-ի համեմատ 2022-ին՝ 6.9 միավորով), ինչի արդյունքում այս մասով Հայաստանը շարունակում է մնալ *հիմնականում ոչ ազատ* երկրների շարքում:
- Մտահոգիչ է նաև *հարկաբյուջետային կայունության ենթաինդեքսի* գնահատականի անկումը (2021-ի համեմատ՝ 8.8 միավորով), ինչն արտացոլում է վերջին շրջանում ՀՀ պետական բյուջեի պակասուրդի, ինչպես նաև պետական պարտքի մակարդակի շեշտակի ավելացման հանգամանքը: Ընդ որում, *պետական ծախսերի ենթաինդեքսը* ևս անկումային է (2021-ի համեմատ՝ 2.4 միավորով)՝ պայմանավորված 2020-2021թթ. ընթացքում պետական ծախսերի զգալի ավելացմամբ: Այս ենթաինդեքսների անկումային արդյունքների մասով հատկապես ահազանգող է այն փաստը, որ ավելացած պետական ծախսերի համար վերցված պարտքային միջոցները 2020 և 2021 թվականներին չեն ուղղվել այնպիսի ծախսերի ֆինանսավորմանը, որոնք կարելի է համարել ներդրումներ (հանրային բարիքի ստեղծում, տնտեսական ենթակառուցվածքների և մարդկային կապիտալի զարգացում և այլն): Հակառակը, վերցված պարտքն ուղղվել է ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը և չի հանդիսացել հավելյալ արժեքի ստեղծման միջոց: Արդյունքում պետական հատվածի կշռի մեծացումը համահունչ չի եղել տնտեսական ազատության սկզբունքներին , իսկ երկարաժամկետում նաև տնտեսության վրա բացասական հետևանքներ է թողնելու:
- 2022 թվականին Հայաստանը Եվրոպայի տարածաշրջանային վարկանիշային աղյուսակում 2021-ի համեմատ 16 հորիզոնականով գրանցել է դիրքային հետընթաց և, կորցնելով Եվրոպայի այլ երկրների հանդեպ մրցակցային առավելությունը, հայտնվել է 34-րդ հորիզոնականում: Ընդ որում, Հայաստանի ՏԱԻ-ի միավորը Եվրոպայի միջինից այս տարի ցածր է 4.2 միավորով, ինչը նշանակում է, որ տարածաշրջանի այլ երկրների համեմատ Հայաստանում տնտեսական ազատության սկզբունքներից շեղումը միջինում ավելի մեծ է եղել: Պետք է նկատենք, որ տարածաշրջանում ոչ մի երկիր, բացի Հայաստանից, այս տարի այլ երկրների հանդեպ իր մրցակցային առավելությունը նման բարձր տեմպերով չի կորցրել: Ինդեքսի գնահատականի անկման խորությամբ ևս Հայաստանը նշված երկրների շարքում վատագույն քառյակում է՝ Ադրբեջանից, Բելառուսից և Թուրքիայից առաջ:
- ԵԱՏՄ պետությունների շարքում, թեև նախորդ տարվա համեմատ անկումային են եղել բոլոր երկրների ինդեքսի գնահատականները, Հայաստանը շարունակում է զբաղեցնել առաջատար դիրք: Երկրորդ հորիզոնականում Ղազախստանն է՝ 64.4 միավորով, երրորդ

հորիզոնականում՝ Ռուսաստանը՝ 56.1 միավորով: ԵԱՏՄ անդամ պետությունների հնգյակը եզրափակում են Ղրղզստանը և Բելառուսը՝ համապատասխանաբար 55.8 և 53.0 միավորներով:

- Հարևան երկրների շարքում Հայաստանը շարունակում է զիջել միայն Վրաստանին (71.8 միավոր, անկումը՝ 5.4 միավոր), և զբաղեցնում է երկրորդ հորիզոնականը (65.3 միավոր, անկումը՝ 6.6 միավոր): Երրորդ հորիզոնականում Թուրքիան է 56.9 միավորով (անկումը՝ 7.1 միավոր), այնուհետև Ադրբեջանը (61.6 միավոր, անկումը՝ 8.5 միավոր) և Իրանը (42.4 միավոր, անկումը՝ 4.8 միավոր): Ընդ որում, Վրաստանը շարունակում է մնալ տնտեսապես *հիմնականում ազատ* երկրների շարքում, Ադրբեջանը հայտնվել է 1 կարգ ցածր՝ *չափավոր ազատ* տնտեսությունների խմբում, Թուրքիան գտնվում է *հիմնականում ոչ ազատ*, իսկ Իրանը՝ *ճնշված* տնտեսությունների խմբում:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*